Армянский Вестник

январь-февраль 2009 г. №1 (28)

Информационно-аналитическая газета общественной организации «Союз Армян Украины». Издается с октября 2006 года.

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՕԴԵՍԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՄՎԵԼ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՀԵՏ



- Պարոն Տիգրանյան նախ թույլ տվեք շնորհավորել Եվրոպայում հայ համայնքի խոշորագույն մշակույթի կենտրոնի բացման առթիվ և ցանկանում եմ պատմեք այս երեք տարիների ընթացքում կատարված աշխատանքների մասին.երբ դրվեց շենքի հիմքը.

- Իմ կարծիքով շնորհավորանքը վերաբերվում է ամբողջ հայ ժողովրդին և սփյուռքում գտնվող հայ համայնքներին: Նախ համառոտ կասեմ, որ այսպիսի համալիրի կառուցման գաղափարը ծնվել է դեռ շատ վաղուց,երբ 90-ական թվականներին Օդեսայի Գագարինյան բարձրահարթում կառուցվեց հայկական Եկեղեցին՝ առաջինը Հայաստանի սահմաններից դուրս հետխորհրդային շրջանում: Թե ինչու հատկապես եկեղեցու կողքին,ես բազմիցս ասել եմ,որ հայերը դարեր շարունակ ապրելով օտարության մեջ, նպատակ են ունեցել համախմբվելու,պահպանելու լեզուն ու կրոնը:Այդիսկ պատճառով որոշում կայացվեց,որ կենտրոնը պետք է կառուցվի հենց այստեղ: Սկսվեցին շինարարական աշխատանքները,որին օգնության ձեռք մեկնեցին ոչ միայն Օդեսայի շրջանի հայերը,այլ Ուկրաինայի տարբեր համայնքների ներկայացուցիչները: Համալիրի ընդհանուր մակերեսը կազմում է 4000մ^{2}: Ներքնահարկում տեղակայված է մարզական դահլիճը, հանդերձարանները,բժշկական սենյակներ և սպորտին վերաբերվող այլ մասնագիտական տարածքներ: Առաջին հարկում համերգային դահլիճն է՝ 420 նստատեղերով,հանդիսությունների սրահը/հարսանիքների, կնունքների/ 200 տեղի համար, ռեստորանը, որտեղ կարելի է համտեսել ազգային ավանդական կերակրատեսակներ: Երկրորդ հարկը լիովին նախատեսված է ութամյա դպրոցի համար, այնտեղ գտնվում են գեղարվեստական, երաժշտական և արհեստավորական դասարաններ՝ուսուցանելու ազգային արհեստներ: Երրորդ հարկում կլինեն մի քանի հյուրասենյակներ՝նախատեսված բարձրաստիճան հյուրերի համար, համայնքի ղեկավարների աշխատասենյակներ, եկեղեցական խորհրդի ներկայացուցչի աշխատասենյակ, խորհրդակցությունների դահլիճ և այլ ծառայողական տարածքներ: Ներկայումս տարվում են բանակցություններ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ,այստեղ ՀՀ գլխավոր հյուպատոսարան բացելու համար, որը նախատեսված կլինի Ուկրաինայի հարավում և Մոլդովայում գտնվող հայերի համար:

- Բացման արարողությանը ներկա էին Ուկրաինայի և Օդեսայի բարձրաստիճան այրեր, Ինչպես նաև ՀՀ և Ուկրաինայի մշակույթի նախարարները:Խնդրում եմ մի քանի խոսք ասեք Ձեր տպավորությունների մասին:

- Մշակույթի կենտրոնը բացվեց Ուկրաինայի և Հայաստանի մշակույթի նախարարների կողմից: Ելույթներ ունեցան մարդիկ,որոնք իրենց գոհունակությունը հայտնեցին նման կառույց, կրթօջախ ստեղծելու համար: Բացման արարողությունը շատ բազմամարդ էր: Ներկաների մեջ կային այնպիսի մարդիկ, որոնք կենտրոնի կառուցման համար տվել էին հարյուր և ավելի գրիվնա:Կենտրոնում կա մարմարյա ցուցանակ, այն դատարկ է, նրա դերը կայանում էր նրանում,որ պետք է գրվեր ազգանուններ, ովքեր դրամներ էին հատկացրել կենտրոնի կառուցման համար:Սակայն հիշեցինք բիբլիական առակը.

- Երբ Հիսուս Քրիստոսը իր աշակերտների հետ գտնվում էր Սինագոգում և մարդիկ դրամ էին դնում գանձանոցում, մի այրի մոտեցավ և դրեց երկու լեպտա.դա ամենամանր դրամն է:Եվ Հիսուսն ասաց. - ահա նա տվեց բոլորից շատ, նա տվեց իր ապրուստի վերջին դրամը, իսկ ուրիշները՝իրենց ավելցուկը:

Եվ հիշելով այս՝ մենք որոշեցինք ոչինչ չգրել:

Ես ցանկանում եմ սրտանց շնորհակալություն հայտնել բոլորին, առավելևս Ոկրաինայի և Օդեսայի բարձրաստիճան այրերին իրենց բարյացակամ վերաբերմունքի համար:

- Եվ վերջում Ձեր բարեմաղթանքները.

-Կրկին իմ շնորհավորանքը մեր հայրենակիցներին, քանզի նման կառույց ունենալը օտար պետության տարածքում՝դա համարում եմ մեծ ձեռքբերում:

Մշակույթի կենտրոնի դռները բաց են բոլորի առջև, ոչ միայն հայազգի, այլև օտարազգի ներկայացուցիչների, ում հետաքրքիր է մեր հարուստ և պատմական հին մշակույթը: Մենք ուրախ ենք Ձեզ տեսնելու:

Հարցազրույցը վարեց՝ Արտեմ Ղարաջյանը



ПЕРЕДПЛАТИТИ ГАЗЕТУ МОЖНА
У БУДЬ-ЯКОМУ ВІДДІЛЕННІ «УКРПОШТИ».
ІНДЕКС НАШОЇ ГАЗЕТИ: 96301

ՕԴԵՍԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԿԱՆԱՆՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Բարի նավարկություն և բարի թռիչք Ձեր մտքերին՝ Հայոց կանայք



Օդեսայի մարզի քառասունհինգ հազարանոց հայկական համայնքը 2008 թվականի տարեվերջին հրաշալի նվեր ստացավ: Սևծովյան ափամերձ Օդեսայի Գագարինյան բարձրահարթում, հայ Առաքելական Ս Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կողքին բացվեց Եվրոպայում նմանը չունեցող հինգհարկանի հոյակերտ մի կառույց՝ Հայ Մշակույթի կենտրոնը: Հեքիաթային պալատ հիշեցնող սրահների ներքո արդեն գործում են հայկական Մեսրոպ Մաշտոցի անվան տարբեր տարիքային խմբերի դպրոցը՝ տնօրեն Էլեն Պողոսյան, «Բարեկամություն» ժողովրդական պարերի համույթը՝ պարուսույց Խաչիկ Աբաջյան, հայկական խոհանոցի «Արարատ» ռեստորանը, մարզասրահը, ինֆորմացիոն կենտրոնը, «Հայկական ժամ» հեռուստահաղորդումը, «Արմյանսկի Վեստնիկ-Օդեսա» թերթի խմբագրությունը և այլն:



Մշակույթի կենտրոնի կառավարիչ Աննա Գնորգյանի մտահղացմամբ ու նախաձեռնությամբ հունվարի 16-ին նորովի վերսկսեց իր աշխատանքները Կանանց միությունը:Նպատակն է համախմբել եռանդով լեցուն, շնորհալի, տաղանդաշատ տարբեր բնագավառների կանանց:

-Սա Ձեր տունն է, Ձեր օջախը,- ասաց տիկին Աննան,-եկեք, մեկմեկու հաղորդեք Ձեր գիտեցածը, իրականացրեք Ձեր մտահղացումներն ու երազանքները: Շուտով կստեղծվի նաև օրիորդաց միություն: Սովորեցրեք նրանց հայկական ընտանիքի լավագույն ավանդույթները, նոր ծլարձակող, մատաղ սերնդին հայեցի դաստիարակելու խնդիրները:

Կանանց միության հավաքույթում, որին մասնակցում էին մեկ տասնյակից ավելի կանայք, կենսափորձով հարուստ տնային տնտեսուհի-ներ՝ առաջարկեցին ստեղծել §Ոսկե ձեռիկների¦ խմբեր՝ դիզայներ-ձևավորողների, նկարչության, հայկական ավանդական ճաշատեսակների պատրաստման ու ձևավորման, կար ու ձևի, ասեղնագործության:

Ասենք նաև, որ ներկաներից շատերն արդեն վաղուց մեծ նվիրումով, ինքնակամ ու ինքնամոռաց հայրենասիրությամբ նվիրվել են այդ գործին: Օրինակ՝ տիկին Էլեն Պողոսյանը չորս տարի է ինչ եկեղե-ցուն կից կիրակ-նօրյա դպրոցում ուսուցանում է հայոց լեզու:Այժմ նա դպրոցի տնօրենն է: Այս տարվանից դասավանդվում են հայոց գրականություն, հայոց պատմություն առարկաները: Սամնուհի Բաբայանը §Լեդի Ստար¦ գեղեցկության դպրոցի տնօրենն է ու գտնում է, որ յուրաքանչյուր կին,բացի իր ներաշխարհի գեղեցկությունից ու բազում այլ արժանիքներից՝ պետք է խնամի ու պահպանի իր արտաքին գեղեցկությունը: Տիկին Սոնան կբացահայտի հին հայկական խոհանոցի՝ խորիզով գաթայի, փախլավայի, լավաշի, ավանդական ճաշատեսակների՝ ավելուկի, մեղրով փոխինձի, հարիսայի պատրաստման գաղտնիքները:

Եվ այսպես շատ էին ոգևորիչ մտահ-ղացումներն ու առաջարկությունները:

Ամփոփման խոսքում Աննա Գնորգյանը նշեց, որ Կանանց միության դռները բաց են ոչ միայն հայուհիների, այլև տարբեր ազգերի շնորհալի կանանց համար:Մենք մեր լավագույն գործերով պետք է համագործակցենք՝ մենք ուժեղ ենք, մենք պետք է թռիչք տանք մեր երազանքներին:


Այո, տեղին է ասված ժողովրդական առածը §Ուս- ուսի տանք՝ սարեր շուռ կտանք¦:

Ու թեև կանանց ուսերը նուրբ են ու փխրուն, բայց ամուր են հայի կամքի պես:

Բարի նավարկություն և բարի թռիչք, Ձեր մտքերին ու երազանքներին՝ Հայոց կանայք:

Մեղեա Աթյան

После института – в первый класс!



«Учиться никогда не поздно». В очередной раз в правдивости этого высказывания можно убедиться на примере ученицы 1-Д класса армянской воскресной школы. Несмотря на то что Инна получила высшее экономическое образование, она заново села за школьную парту. По словам ученицы, армянский язык очень красивый, но довольно сложный. Ей нравится произношение армянских звуков. Хотя Инна по национальности украинка и не имеет прямых родственников армянского происхождения, она уже делает успехи в учебе. А ее целью является свободное владение армянским языком. Ну что ж, желаем Инне и всем ее одноклассникам успехов в обучении.

В Одесском Армянском культурном центре

11 февраля в 18.00 состоится гала-концерт хореографической танцевальной группы «Дружба».

13 февраля в 16.00 трндез.

Фоторепортаж из Одесского Армянского культурного центра



Танцевальный коллектив «Дружба»

Урок армянского языка



Организаторы чемпоната по мини-фуболу

ПОДПИСАТЬСЯ НА ГАЗЕТУ МОЖНО В ЛЮБОМ ОТДЕЛЕНИИ СВЯЗИ «УКРПОШТА». ПОДПИСНОЙ ИНДЕКС: 96301

Հայ մշակույթի օրերը Ղրիմում


Օլեգ Գաբրիելյան և Տատյանա Ումրիխինան:

Ղրիմահայոց ընկերության գործունեության մեջ մեծ տեղ է հատկացվում Ղրիմում և ողջ Ուկրաինայի տարածքում հայ արվեստի և մշակույթի տարածման հարցերին: Հայտնի է, որ ոչ մի գործոն այնքան արդյունավետ չէ ժողովուրդների միջև կապերի մերձեցման, բարի դրացիական հարաբերությունների հաստատման ասպարեզում, որքան միմյանց մշակույթին հաղորդակից լինելը, արվեստի լեզվով միմյանց հետ շփվելը: Լավագույնս գիտակցելով այս հանգամանքը, դեռևս 1990 թվականին անցկացվել են Ղրիմում հայ մշակույթի օրեր՝ նվիրված մեծն Հովհաննես Այվազովսկու հիշատակին: Որոշ ընդմիջումից հետո, 1994 թվականից, ՂՀԸ նախագահ Անուշավան Դանիելյանի նախաձեռնությամբ՝ հայ մշակույթի օրերը Ղրիմում դարձան ավանդական և նվիրվում էին որևէ հիշարժան տարեթվի՝ Ալեքսանդր Սպենդիարյանի, Հովհաննես և Գաբրիել Այվազովսկիների հոբելյաններին, Ղրիմահայոց ընկերության տարելիցներին և այլն: Սկզբնական շրջանում արվեստի այդ տոներին հրավիրվում էին հայ մշակույթի բազմաթիվ գործիչներ Հայաստանից: Ղրիմի լավագույն բեմերից հնչել են անզուգական Գոհար Գասպարյանի, Տիգրան Լևոնյանի, Հասմիկ Հացագործյանի, Գայանե Գրիգորյանի, Ռուբեն Մաթևոսյանի, հանրահայտ բարդ Ռուբեն Հախվերդյանի, ժողովրդի սիրելի Արամ Ասատրյանի և այլոց ձայները, Ղրիմահայերին ու այլ ժողովուրդների ներկայացուցիչներին ուրախություն ու ծիծաղ են պարգևել Աշոտ Ղազարյանը, Գևորգ Դոդոզյանը, «Շարմ» և «Նոր հայեր» ուրախների ու հնարամիտների ակումբի տղաները, իրենց արհեստավարժ կատարումներով բազմազգ հանդիսատեսին գերել են Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը, ջութակահարներ Ճենտերեճյան եղբայրների, Հայաստանի օպերայի և բալետի պետական թատրոնի բալետի խմբի և «Բարեկամություն» պարի համույթի կատարումները: Նրանց ուղեկցում և համերգների ռեժիսուրան ապահովում էր ճանաչված արվեստագետ Լաերտ Մովսիսյանը: Արտիստների հրավիրելու գործում մեծ դեր էր տանում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն, հանձին Ղրիմահայոց ընկերության մեծ բարեկամ Զիվան Մովսիսյանի:

Շուտով եկան ժամանակներ, երբ դրամական միջոցների սղությունը, երկու պետություն-ների միջև մշակութային կապերի մեջ նոր, առավել պաշտոնական ձևերի առաջացումը, ինքնաթիռով տեղափոխման ծախսերի շեշտակի ավելացումն այդպիսի համերգների կազմակերպումը դարձրեցին փաստորեն անինարին: Բայց այս դժվարությունները խթան հանդիսացան այստեղ՝ Ղրիմում տաղանդավոր կատարողների ու կազմակերպիչների ի հայտ գալու և մի ընդհանուր՝ ղրիմահայ արվեստի դրոշի ներքո համախմբվելու համար: Եվ ահա մի քանի տարի է, որ հայ մշակույթի օրերը Ղրիմում կազմակերպվում են տեղացի կատարողների, կոլեկտիվների ու կազմակերպիչների ջանքերով:

2008 թվականի Հայ մշակույթի օրերը Ղրիմում, ինչպես և այդ տարվա մնացած միջոցառումները, նվիրված էին Ուկրաինայում հայ հոգևոր մշակույթի ամենանշանակալի կոթողի՝ Սուրբ Խաչ վանքի հիմնադրման 650-ամյա հոբելյանին:

Ընդհանրապես, հայ մշակույթի օրերը բազմաթիվ, ամենատարբեր բնույթի միջոցառումների մի շարք է: Այն սկսվում է Ղրիմի անպարտելի չեմպիոն Ա. Խաչիկյանի հիշատակին նվիրված նարդու Ղրիմի չեմպիոնատով, Տ. Պետրոսյանին նվիրված շախմատի միջազգային ավանդական մրցաշարով, ֆուտբոլի, բիլյարդի, սեղանի թենիսի, նույնիսկ բլոտի մեծահասակների ու երիտասարդական առաջնություններով, շարունակվում է ղրիմահայ նկարիչների ու լուսանկարիչների ցուցահանդեսներով, գրական-երաժշտական երեկոներով, ՂՀԸ կողմից հրատարակված նոր գրքերի շնորհանդեսներով, «Մասյաց աղավնի» ամսագրի հատուկ թողարկման լույս ընծայումով, հայկական կիրակնօրյա դպրոցների «Աղբյուր» մրցանակաբաշխությամբ, «Ղրիմի հայ գեղեցկուհի» մրցույթով, Ղրիմի հայ երիտասարդության կոմիտեի և հայ կանանց «Մայրիկ» լիգայի միջոցառումներով և այլն:

Հայ մշակույթի օրերի կիզակետն, իհարկե, մեծ համերգն է, որով էլ եզրափակվում է ամիսներ տևող այդ շարքը: 2008 թ. այն տեղի ունեցավ Սիմֆերոպոլի ամենահարգի մշակութային կենտրոններից մեկի՝ Գորկու անվան ռուսական պետական դրամատիկական թատրոնի դահլիճում:

Մշակույթի այս տոնի կազմակերպիչները՝ ՂՀԸ մշակույթի հանձնաժողովը, համերգի ռեժիսոր և վարող Վ. Վերմիշյանը, «Արարատ» պարի համույթի գեղարվեստական ղեկավար Ա. Գրիգորյանը, ընկերության բոլոր աշխատակիցները երկարատև և լուրջ նախապատրաստական աշխատանք էին կատարել, չնայած այն բանին, որ Սուրբ Խաչի հոբելյանական տարվա մեծ քանակությամբ միջոցառումների նախապատրաստումն ու անցկացումը մտավոր ու ֆիզիկական ուժերի գերլարումով էր իրականացվել:

Համերգն սկսվեց Ղրիմահայոց ընկերության նախագահ պրոֆեսոր Օլեգ Գաբրիելյանի բացման խոսքով, որը, փաստորեն, այդ տարվա նախորդած ժամանակշրջանում ընկերության կատարած աշխատանքի հաշվետվությունն էր: Նա Սուրբ Խաչ վանքի 650-ամյակի արծաթե հուշամեդալներ հանձնեց ՂՀԸ վեց մեկենասների՝ Վ. Աբգարյանին, Դ. Ալեքսանյանին, Ա. Ամատունուն, Ս. Ամիրխանյանին, Վ. Գուդմանովին, Մ. Խաչատուրյանին:

Դրանից հետո բեմ հրավիրվեց Ղրիմի Ինքնավար Հանրապետության Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Տատյանա Ումրիխինան: Նա Հանրապետության կառավարության ու Գերագույն խորհրդի հանձնարարությամբ կառավարական պարգևներ հանձնեց արվեստի ու մշակույթի հայ գործիչներին: Հանրապետության արվեստի վաստակավոր գործչի կոչումներ ստացան հանրաճանաչ երգիչներ Գարիկ Ավետիսյանն ու Գայանե Թորոսյանը, երաժիշտ Յուրի Ծատուրյանը: Վաստակավոր լրագրողի կոչում շնորհվեց «Մասյաց աղավնի» հանդեսի գլխավոր խմբագիր Վահան Վերմիշյանին, «Արարատ» պարի ժողովրդական օրինակելի համույթի գեղարվեստական ղեկավար Արամ Գրիգորյանը պարգևատրվեց ՂԻՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով: Այդ օրը Խորհրդային Միության հերոս, Ղրիմի ԳԽ պատգամավոր գեներալ-լեյտենանտ Աշոտ Ամատունին ՂՀԸ Հովհ. Այվազովսկու անվան հուշամեդալներ հանձնեց Սուրբ Խաչ վանքի վերականգնման և տոնակատարությունների կազմակերպման աշխատանքներին մասնակցած հայ և այլազգի գործիչներին:

Ներկաների համար անակնկալ էր՝ բեմում Պեկինի օլիմպիադայի չեմպիոն Արթուր Այվազյանի հայտնվելը: Հանդիսատեսները ծափողջույններով դիմավորեցին ղրիմցի հայազգի նշանառուին: Ղրիմահայոց ընկերությունն իր հերթին հանրաճանաչ մարզիկին ընծայեց «Ղրիմ: Հայեր: Արարման տասը դար» գիրքը՝ տեղադրված նկարիչ Ս. Տրիբունսկու կողմից պատրաստված, արծաթե ամրակներով փայտե փորագրված կազմի մեջ: Այդպիսի մի արժեքավոր նվեր Սուրբ Խաչի 650-ամյակի հուշամեդալի հետ միասին ստացավ նաև Տ. Ումրիխինան, որն իր բարյացկամ վերաբերմունքով, վանքի հոբելյանի հետ կապված հարցերի արհեստավարժ լուծումով արժանացել է Ղրիմի ողջ հայության հարգանքին և երախտագիտությանը: Ղրիմի պետական ինդուստրիալ-մանկավարժական համալսարանի ռեկտոր պրոֆեսոր Ֆևզի Յակուբովը միջազգային կարգի գրոսմայստեր Յուրի Հայրապետյանին արժեքավոր նվեր հանձնեց: Դրան անմիջապես հաջորդեց երաժշտական նվերը. նույն համալսարանի ջութակահարների համույթը՝ Զարեմա Ալիևայի ղեկավարությամբ կատարեց Ալեքսանդր Սպենդիարյանի և Արամ Խաչատրյանի ստեղծագործություններից:

Հետո սկսվեց հայ արվեստի իսկական մի տոն: Ելույթ ունեցան երգչուհիներ Գայանե Թորոսյանը, Նելլի Սարուխանյանը, Վարդուհի Դիլանյանը, Լուսինե և Քրիստինե Հակոբյան քույրերը, Շուշան Սաֆարյանը: Ներկաներին ուրախ տրամադրություն հաղորդեցին Գարիկ Ավետիսյանի կատարումները: Ժողովուրդների բարեկամության իրական դրսևորում էր Ուկրաինայի վաստակավոր արտիստուհի, ղրիմթաթարական ժողովրդի առաջադեմ դուստրերից մեկի՝ Ելմիրա Նալբանդովայի ելույթը: Երգչուհին հայերեն և ռուսերեն լեզուներով կատարեց Անատոլի Դնեպրովի և Թաթա Սիմոնյանի «Իմ Հայաստան» երգը: Յու. Ծատուրյանը սաքսաֆոնով կատարեց հայկական «Ամպեց կորավ լուսնկան» մեղեդին, Վ. Վերմիշյանը, Ս. Ճգնավորյանի դաշնամուրային նվագակցությամբ, կատարեց Առնո Բաբաջանյանի «Մի շտապիր» երգը:

Իհարկե, համերգի ընթացքում ամենակարևորը «Արարատ» ժողովրդական պարի համույթի տրված համարներն էին: Պարերին մասնակցում էին ինչպես մեծերի, այնպես էլ միջակ և փոքրիկների խմբերը: Բացի արդեն հանրաճանաչ «Քոչարիից», «Կինտոներից», 2008 թ. բեմադրված «Ազատություն» և այլ պարերից, ցուցադրվեց նաև աղջիկների «Գարնանային» պարը, որտեղ մենապարում էր պարուսույց Նատալյա Եվտուշոկը:

Հանդիսատեսները մեծ ոգևորությամբ էին դիմավորում կատարողներին, ներողամտաբար ու բարյացկամ էին վերաբերվում սկսնակ արտիստների ելույթներին: Չէ որ, անկախ այն բանից, որ կատարողների մի մասը հասել է բավականին մեծ արդյունքների, բեմեր ու կոչումներ է նվաճել, արժանացել երաժշտասեր հասարակության սիրուն և գնահատանքին, այնուամենայնիվ՝ նրանք բոլորն էլ հիմնականում ոչ արհեստավարժ կատարողներ են, ուղղակի ժողովրդի ծոցից դուրս եկած տաղանդներ:

Վահան Վերմիշյան

Украино-армянские отношения

В 2009 году с официальным визитом Украину собирается посетить Президент Армении Серж Саркисян.

В первом квартале нынешнего года в Ереване планируется провести заседание Совместной украино-армянской межправительственной Комиссии по вопросам сотрудничества. Также пресс-служба посольства Украины в Армении напоминает, что 25 декабря исполняется 17 лет со дня установления дипломатических отношений между Украиной и Арменией.

В нынешний момент украино-армянские отношения характеризуются обоюдным стремлением сторон к дальнейшему расширению сотрудничества в таких сферах как: торгово-экономическая, транспортная, гуманитарная .

Договорно-правовая база двух стран насчитывает 73 документа, 70 из которых являются действующими. Главным политическим документом является: «Договор о дружбе и сотрудничестве между Украиной и Республикой Армения», заключенный 14 мая 1996 года, а в экономической сфере – Договор между Украиной и Арменией об экономическом сотрудничестве 2001-2010 гг. от 1 марта 2001 года.

На протяжении 2008 года украино-армянский политический диалог значительно активизировался. Серьезным импульсом для этого стала встреча президентов Украины Виктора Ющенко и Армении Сержа Саркисяна в Крыму в конце июля, в рамках участия армянской делегации в праздновании 650-летия монастырского комплекса Сурб Хач. В ходе встречи главы государств обсудили широкий спектр вопросов двусторонних отношений, региональную и международную проблематику, а Католикос Всех Армян Гарегин II освятил восстановленную армянскую святыню.




Граждане Армении заменят свои паспорта на два документа

С 2010 года граждане Армении заменят свои паспорта на два документа, удостоверяющие личность гражданина. Как сообщил 23 декабря на пресс-конференции начальник Управления паспортов и виз, подполковник Полиции Армении Норайр Мурадханян, паспорта старого образца будут действительны до внедрения новой системы

analitika.at.ua

ПОМНИМ...



6 января в Киеве скончался исполнительный директор Киевской армянской общины

Ваге Петросович Степанян.

Ваге Петросович Степанян являлся одним из известных представителей армянской диаспоры в Киеве, запомнился всем замечательным, добрым человеком, теплоты которого нам очень будет не хватать.


Որդու Արա Շիրազի հետ

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ 90 ԱՄՅԱԿԸ

Կապուտիկյան Սիլվա (Սիրվարդ) Բարունակի (ծնվել է 20. 1. 1919-ին Երևանում) – հայ բանաստեղծուհի, հասարակական գործիչ: Սփյուռքի գաղթավայրերում կատարած շրջագայությունից հետո Կապուտիկյանը գրել է «Քարավանները դեռ քայլում են» (1964), «Խճանկար հոգու և քարտեզի գույներից» (1976) և այլ ուղեգրություններ: Սիլվա Կապուտիկյանը հեղինակ է նաև մանկական բանաստեղծությունների: Կապուտիկյանի ստեղծագործությունները թարգմանվել են բազմաթիվ լեզուներով: Ռինի ռուսերեն ավելի քան 20 ժողովածու: ԽՍՀՄ պետական (1952), Հայաստանի պետական (1988), Նոսիդեի անվան միջազգային (Հռոմ, 1989) մրցանակներ:

ԽՈՍՔ ԻՄ ՈՐԴՈՒՆ

Այս գարնան հետ, այս ծաղկունքի,
Այս թռչնակի, այս առվակի,
Հետն այս երգի ու զարթոնքի
Բացվեց լեզո՛ւն իմ մանկիկի:
Ու թոթովեց բառ մի անգին
Հայկյան լեզվից մեր սրբազան,
Ասես մասունք հաղորդության
Դիպավ մանկանս շրթունքին...
- Լսի՛ր, որդիս, պատգամ որպես
Սիրող քո մոր խո՛սքը սրտանց,
Այսօրվանից հանձնում եմ քեզ
Հայոց լեզո՛ւն հազարազանձ:
Կտրել է նա, հանց աստղալույս,
Երկինքները ժամանակի,
Շառաչել է խռովահույզ
Սլացքի հետ հայկյան նետի,
Ու Մեսրոպի սուրբ հանճարով
Դարձել է գիր ու մագաղաթ,
Դարձե՛լ է հո՛ւյս, դարձել դրո՛շ,
Պահել երթը մեր անաղարտ...
Նրանո՛վ է մրմնջացել
Հայ պանդուխտը վերքն իր սրտի,
Նրանո՛վ է որորտացել
Կռվի երգն իմ ժողովրդի,
Նրանո՛վ է մայրս ջահել
Ինձ օրորոց դրե՛լ մի օր,
Հիմա եկել, քե՛զ է հասել
Նրա կարկաչը դարավո՛ր...
Բա՛ց շուրթերդ, խոսի՛ր, անգի՛ն,
Ժիր դայլայլի՛ր, ի՛մ սիրասուն,
Թող մանկանա՛ քո շուրթերին
Մեր ալեհե՛ր հայոց լեզուն...
Պահի՛ր նրան բարձր ու վճիտ,
Արարատի սուրբ ձյունի պես,
Պահի՛ր նրան սրտիդ մոտիկ,
Քո պապերի աճյունի պես,
Ու ոսոխի զարկիցը սև
Դու պաշտպանի՛ր կրծքով նրան,
Ինչպես մո՛րդ կպաշտպանես,
Թե սո՛ւր քաշեն մորդ վրան,
Ու տե՛ս, որդիս, ո՛ւր էլ լինես,
Այս լուսնի տակ ո՛ւր էլ գնաս,
Թե մո՛րդ անգամ մտքիցդ հանես,
Քո մա՛յր լեզուն չմոռանա՛ս:

Открытие Дома-музея великой поэтессы Сильвы Капутикян



Ушла, чтобы остаться
Как жаль, что стала я теперь другой,
Суровой и карающей я стала...
Сильва Капутикян

20 ЯНВАРЯ армянство отметило 90-летие известной армянской поэтессы XX века, академика, лауреата многочисленных международных премий, заслуженного деятеля культуры Армянской ССР, публициста и общественного деятеля Сильвы КАПУТИКЯН (1919-2006). Главным событием стало открытие Дома-музея в квартире, где она прожила более тридцати лет. В церемонии принял участие Президент Армении Серж Саригсян. Глава государства ознакомился с экспозицией, особо отметив значение огромного духовного наследия поэтессы.

Музей создан согласно пожеланию С.Капутикян — она сознавала свое место и роль не только в литературной и духовной, но и общественной жизни Армении и армянского этноса. В этой квартире она прожила долгие годы, но это был не только ее Дом, но и Дом ее друзей, коллег, единомышленников. Здесь со свойственной щедростью и радушием она принимала гостей, навсегда сохранивших память о мудрой и обаятельной хозяйке. Здесь создавались ее поэтические строки, ее публицистика — Сильва Капутикян не знала в творчестве покоя, даже не в самые благоприятные периоды жизни страны.

Трансформация в музей жилых помещений всегда таит некоторую потаенную опасность исчезновения ауры, живого духа. Во вновь открытом музее этого не произошло. "Именно таким она хотела видеть свой музей. Здесь находятся дорогие ее сердцу вещи", — сказал сын поэтессы, известный скульптор Ара Шираз, принимавший непосредственное участие в его создании. Экспозиция полна фотографий, подарков, полученных Сильвой Капутикян от благодарных читателей и поклонников из всех тех стран, где она побывала, где знали ее творчество. Конечно, максимально сохранены и представлены предметы обстановки и быта, личные вещи. Все они, кажется, сохранили живое дыхание и тепло ее рук и сердца. Наконец, святая святых — рабочая комната со множеством книг — спутников поэтессы. И последняя рукопись...

С каждым предметом — от раритетов до трогательных презентов от школьников диаспоры — у их хозяйки были связаны воспоминания и различные истории. Вообще вся ее жизнь была бесконечной цепью встреч и общения с людьми.

Хочется надеяться, что Музей Сильвы Капутикян станет частью духовного пространства, что Дом ее, как и при жизни, станет тем очагом, где всегда будет сохраняться тепло ее замечательной хозяйки.

Анна Каграманян

Шарль Азнавур получит специальный приз "Lifetime achievement award"

Шарль Азнавур награжден почетным призом международного музыкального рынка. С 18 по 21 января во французском приморском городе в 43-й раз была проведена крупнейшая и известнейшая в мире конференция и выставка в области музыкального бизнеса MIDEM, которая является одной из самых престижных международных музыкальных инициатив.

Французский шансонье Шарль Азнавур получил специальный приз "Lifetime achievement award" за достижения на протяжении жизни.

Это мероприятие, выступающее под официальным лозунгом «The world's music community», или «мировая музыкальная общественность», каждый год собирает в Каннах лидеров всемирного музыкального рынка. Также проходят выставки, конференции, форумы, концерты.

19 января мастер шансона удостоился ежегодного престижного приза этой инициативы.

Сергею Параджанову исполнилось бы 85 лет

9 января известному кинорежиссеру и художнику Сергею Параджанову исполнилось бы 85 лет.

Параджанов родился в Тбилиси. После окончания железнодорожного института, Тбилисской консерватории и хореографического училища – в 1945 году он стал студентом режиссерского факультета института кинематографии.

Известность Параджанову принес снятый в 1964 году фильм «Тени забытых предков» (в иностранном прокате «Огненные кони»).

До этого он снял несколько художественных и документальных фильмов.

Параджанов с равным успехом творил в армянской, грузинской и украинской кинематографии.


В 1983-1988 гг. Параджанов работал на киностудии «Грузия-фильм», где снял фильмы «Легенда о Сурамской крепости», «Пиросмани».

В большинстве случаев Параджанов являлся автором сценариев собственных фильмов. Его работы неоднократно становились призерами престижных кинофорумов.

Сергей Параджанов скончался в 1990 году в Ереване.

В Украине на государственном уровне было отмечено 85-летие со дня рождения армянского и украинского кинорежиссера Сергея Параджанова.

«Маэстро и молодежь»



Маэстро Дживан Гаспарян встретился с молодежью Ассоциации Молодежных Организаций Всемирного армянского конгресса.

Встреча проходила в доме-музее Арама Хачатуряна. В начале встречи вице-президент Ассоциации Молодежных Организаций Мариам Мартиросян представила цикл мероприятий «Встреча с известными людьми» и его цели. «Встречи со знаменитыми людьми очень важны для нас. Эта инициатива для нашей молодежи – великолепная возможность вблизи познакомиться с историей жизни, пройденным путем, деятельностью именитых представителей нашего искусства и культуры. Таким образом, мы можем не только слышать их и учиться у них, но и делиться нашими раздумьями, нашими проблемами», - отметила Мариам Мартиросян.

Дживан Гаспарян начал рассказ о себе с детства. Рассказал, как смог в первый раз на собранные небольшие деньги купить дудук. Был совсем маленьким в то время. И научился играть на дудуке самостоятельно. Закрывал глаза и ничего не видел... Просто играл и играл... Играл самозабвенно и вдохновенно...

Маэстро рассказал о первых его шагах на большой сцене, о трудных и сложных моментах жизни и большом успехе, о хороших друзьях и родных людях, о тех, кто был с ним рядом и в минуты радости, и во времена лишений.

«Дорогие юноши и девушки, помните, что в жизни самое главное – быть и оставаться людьми в любых обстоятельствах. Будьте всегда добрыми и искренними, не забывайте никогда о чести и достоинстве... Главное, идите с ясным сердцем. В жизни остается доброе имя, хорошие воспоминания. И больше ничего», – произнес маэстро.

Хотя встреча с Дживаном Гаспаряном длилась не один час, тем не менее собравшиеся никак не хотели отпускать маэстро, который ночью должен был уехать на гастроли в Италию.



«Сегодня наши сердца связались друг с другом. По возможности, обязательно встретимся вновь», – в заключение пообещал мэтр.

Про вечер Туманяна в Киеве

В средней школе №88 города Киева был проведен конкурс, посвященный Туманяновским чтениям. В конкурсе принимала участие почти вся школа. Целью этого мероприятия было ознакомление с национальными традициями, обычаями армянского народа, поддержка и укрепление армяно-украинских отношений. Финалом конкурса был заключительный литературно-музыкальный утренник.

Победителям конкурса были вручены дипломы и подарки. Призы получили также все участники литературно-музыкального утренника, а учителя были награждены дипломами от президента САУ Айка Памбухчяна и от Киевской армянской общины.

Песни Комитаса номинированы на Grammy



Канадская оперная певица Изабель Байракдарян включена в список номинантов на Grammy в категории «Лучшее вокальное исполнение» с песнями Комитаса, сообщает Grammy.com.

Изабель Байракдарян выступала в лучших оперных театрах мира – в Ла-Скала, «Метрополитен-Опере», Карнеги-холл, является лауреатом нескольких наград, в том числе Золотой юбилейной медали королевы Елизаветы II. Певица родилась в Ливане в 1974 году.

Армянский композитор Комитас (Согомон Согомонян, 1869-1935) вошел в историю армянской культуры как собиратель армянских национальных песен и автор ряда композиций фольклорного направления.

По материалам analitika.at.ua

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(Սուրբ Էջմիածին, Յունուարի 6, 2009 թ.)

«Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի, Որդիք մարդկան օրհնեցէք, Զի վասն մեր մարմնացաւ»:
(Շարական)



Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփիւռս աշխարհի:

Օրհներգութեամբ եւ գոհաբանական աղօթքներով այսօր տօնում ենք մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնը՝ աւետելով Աստուծոյ մարդեղութեան եւ Փրկչի յայտնութեան բարի լուրը:

Մեր Եկեղեցու աղօթասէր հայրերը Սուրբ Ծնունդը կոչել են «խորհուրդ մեծ եւ սքանչելի»: Այդպէս են անուանել, քանզի անհնար է բացատրել, թէ ինչպէ՞ս անբաւելին՝ յաւիտենականն ու անսահմանը, խանձարուրի մէջ պարուրուեց, ինչպէ՞ս Աստուծոյ Խօսքն ու Իմաստութիւնը ծնուեց ոչ բանական կենդանիների մսուրում: Մարդկային մտքին անհասանելի է մնում, թէ ինչպէ՞ս Աստուծոյ Միածին Որդին, Արարչի փառքի լոյսը արարած եղաւ, Տէրը ծառայի կերպարանք ստացաւ:

Աստուծոյ այս մեծ հրաշքի ինչպէս լինելը չգիտենք եւ չենք կարողանում բացատրել, սակայն գիտենք այդ հրաշքի պատճառը. «Զի վասն մեր մարմնացաւ». «Որովհետեւ մեզ համար մարմնացաւ»: Իրաւամբ, այս մի քանի բառերը բացատրում են Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Բարձրեալի նախախնամական տնօրինութիւնը:

Աստուած Տէրն է եւ Արարիչը «երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից»: Նրա փառքն են պատմում Իր նիւթեղէն եւ հոգեղէն ստեղծագործութիւնները՝ տիեզերքը, մարդիկ եւ հրեշտակները: Աստուած համայնի՝ կարիքը չունի ոչ մարմնի, ոչ ժամանակի: Աստուծոյ յաւիտենական Գահին բազմած Փրկչին պետք չէր երկնքի բարձունքներից իջնել մեղսակորոյս աշխարհ: Խաղաղութեան Իշխանին պետք չէին հալածանք, չարչարանք, խաչելութիւն, պետք չէին փշէ պսակը, մահը, կամ յարութիւնը: Բայց այս բոլորը Փրկիչը յանձն առաւ մեզ համար: Սէրն Աստուծոյ՝ մարմին առաւ, որպէսզի ազատի մեզ մեղքի ու մահուան իշխանութիւնից եւ արժանացնի երանութեանը յաւիտենական կեանքի: «Սրանո՛ւմ է սէրը. մենք չէ, որ սիրեցինք Աստծուն, այլ Նա սիրեց մեզ եւ ուղարկեց Իր Որդուն, մեր մեղքերի քաւութեան համար» (Ա Յովհ. Դ 10): Մեր պաշտելի Աստուած չի ցանկանում մեր մահը կամ դատապարտութիւնը, դրա համար իսկ եկաւ մեր մէջ բնակուելու, եկաւ վերափոխելու մեր կեանքը, պարգեւելու յոյսը փրկութեան, կեանքը յաւիտենական:

Արդարեւ, մեր փառաբանական երգերը եւ գոհաբանական մաղթանքները արժէք չունեն, եթէ մեր հոգու խորքում չկայ այն անսասան հաւատը, որ Աստուած «մեզ համար մարմնացաւ»: Մեր աղօթքները լսելի չեն լինի, եթէ մեր էութեան խորքում չի բնակուում Աստուած:

Սուրբ Ծնունդը, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, Աստուծոյ եւ մարդկութեան հաշտութեան սկիզբն է, յաւիտենական կեանքը ժառանգելու հրաւէրը, Քրիստոսով փրկութեան շնորհի մէջ մնալու պատգամն է մեզ: Աստուած Իրեն յայտնեց մեզ Իր լիութեան մէջ, որպէսզի աստուածային եւ մարդկային կատարելութեան այդ լիութիւնից անմասն չմնանք, որպէսզի կատարելութեան այդ լիութիւնից յագենայ փրկութիւն յուսացող մեր կեանքը: Հաւատում ենք, որ Աստուած մէկ է: Միութիւնը մեզ անհրաժեշտ չէ՞: Քարոզում ենք, որ Աստուած սէր է: Սիրոյ կարիքը չե՞նք զգում, կարո՞ղ ենք առանց սիրոյ ապրել, ստեղծագործել: Աստուած, Ում միշտ աղօթում ենք, սուրբ է, ճշմարիտ ու բարերար: Քննենք մեր սրտերը, սրբութեան կարիքը չե՞նք զգում, քննենք մեր գործերը՝ ճշմարիտ, բարի եւ բարերա՞ր են միշտ: Դաւանում ենք, որ Աստուած արդար է: Մենք արդարութեան կարիքը չե՞նք զգում ամեն օր եւ ամեն ժամ: Խոստովանում ենք, որ Աստուած մեր Հայրն է, գթասիրտ, խաղաղութեան մշտահոս աղբիւր, պարգեւատու բարիքների: Խաղաղութիւնը ամենօրեայ մեր հայցը եւ մաղթանքը չէ՞, կարօտ չէ՞ աշխարհը հանապազ գթասրտութեան ու խնամքի: Ով այս կերպ է ճանաչում Աստծուն, նա չի կարող ապրել առանց Նրա եւ իր փրկութեան յոյսը չկապել Աստուածորդու մարդեղութեան հաւատքին եւ չձգտել լինել Նրա մշտական օրհնութեան եւ շնորհների ներքոյ:

Ուղեկորոյս է աշխարհը առանց բեթղեհէմեան աստղալոյսի: Առանց Քրիստոսի աշխարհը միշտ լինելու է անհանդարտ, հոգսաշատ եւ բարոյազուրկ: Միայն նիւթական առաջընթացը չի ապահովելու ճգնաժամային իրավիճակներից խուսափումը, կանխումը գժտութիւնների ու բախումների, վերացումը աղէտների ու աղքատութեան: Հոգեւորի անտեսումը, աշխարհայնացման ընթացքները միանշանակօրէն խաթարում են նուիրագործուած աւանդոյթները, աղճատում բարոյական պատկերացումներն ու հասկացութիւնները, նաեւ մարդու ներաշխարհը՝ պատճառ դառնալով Աստծուց, իր անձից ու աշխարհից մարդու օտարացման եւ անտարբերութեան: Աստուած է սնուցում մարդկային հոգին: Աստուածասէր հոգով եւ հաւատքի ուժով պիտի նորոգուի մարդկային կեանքը, որպէսզի չվերանան սահմանները մարդասիրութեան եւ եսասիրութեան, չխառնուեն արդարն ու անարդարը, ճշմարիտն ու կեղծիքը եւ չշփոթուեն բարին ու չարը: Շատ խնդիրներ պիտի վճռուեն, շատ կնճիռներ պիտի հարթուեն ու վէրքեր ամոքուեն գիտակցական այն արժեւորմամբ եւ հաւատքով, որ Աստուածորդին մեզ համար մարմնացաւ: Կատարեալ սիրոյ այս օրինակը լոյս է, առաջնորդութիւն կեանքի եւ սիրով գործելու պատուէր: «Հագէք, ուրեմն, գութ, ողորմութիւն, քաղցրութիւն, խոնարհութիւն, հեզութիւն, համբերատարութիւն՝ հանդուրժելով միմեանց, ներելով միմեանց, եթէ մէկը միւսի դէմ գանգատ ունի. ինչպէս Աստուած Քրիստոսով ներեց ձեզ, նոյն ձեւով արէք եւ դուք: Եւ այս բոլորի վրայ հագէք սէրը, որ կապն է կատարելութեան» (Կող. Գ 12-14):

